



Երևան, 5 Փետրվար, 2018

ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, կուր ինձ իմասպութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԵՆՔԸ՝ ԻՄ ՅՈՅՎԻ ԵՐԳՍ

Յիշէ խոստումդ, որ տուիր ինձի՝ քու ծառայիդ.
այն խոստումը, որուն վրայ դրի յոյս:
Տառապանքիս մէջ սա է միսիթարանքս,
որ քու խօսիդ կեանք տուաւ ինձի:
Հակառակ ամբարտաւան մարդոց բուռն ծաղրանքին,
ես Օրէնքէդ չխոտորեցայ:
Անցեալին տուած վճիռներդ միշտ իմ մտքիս մէջ են, Տէր,
աննոցմով կը բազալերուիմ:
Զայրոյթով կը լեցուիմ ամբարիշտներուն համար,
որոնք Օրէնքդ լիած են:
Այս պանդուխտ կեանքիս մէջ
կաննեներդ են մշտական երգս:
Գիշերուան մէջ անունդ միշտ իմ մտքիս մէջ ունիմ, Տէր,
եւ Օրէնքիդ մասին կը խորհիմ:
Կեանքի մէջ այս է բաժինս.-
Հրահանգներուդ հնազանդիլ:

ԾԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
ազ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի զիշերի,
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԸ

ՀՎ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ

2:1-10

ՍՈՒՏ ՈՒԽՈՒՑԱՆՈՂՆԵՐԻՆ ԶԳՈՒՇԱՍԱ (2:1-10)

Պետրոս Առաքեալ կարեւորութեամբ շեշտելէ եփք, թէ որքան կարեւոր է կառչիլ մարգարեական վկայութիւններուն, որոնք անցեալէն եկած պարզամեցին Ասպուծոյ փրկութեան պարզամը, պարասպեցին այդ փրկութեան ճամբան, որպէս նախաշաւիղ, որուն լրումն ու կափարումն էր մեր Տէրն ու Փրկիչ՝ Յիսուս Քրիստոս: Այս շեշտադրումնն յեփոյ, Պետրոս Առաքեալ կ'անդրադառնայ սուր մարգարէններուն, որոնք ինչպէս անցեալին, նաեւ իր ժամանակներուն եւս կային, կան ու պիտի ըլլան, որպէսզի իրենց ուսուցումներով մոլորեցնեն: Նոյնը կը զգուշացներ նաեւ Քրիստոս, երբ Իր աշակերտներուն կ'ըսէր. «Սուր քրիստոսներ եւ սուր մարգարէներ պիտի ելեն և մեծ հրաշքներ ու նշաններ կափարեն՝ որպէսզի մոլորեցնեն, եթէ կարենան, նոյնիսկ Ասպուծոյ ընդունակները» (Մարտիոն 24:24): Տակաւին շիաշուած միւս Առաքեալները եւս, իրենց նամակներուն մէջ կ'անդրադառնան այս երեւոյթին (Յուդա 1:4; Ա Յովի 4:4-5; Տիգրոս 1:10): Պետրոս Առաքեալ յսկակօրէն ցոյց գուաւ անցեալի մարգարէնները, որոնց պարզամները մարդկային կամքին ծնունդ չէին, այլ՝ Սուրբ Հոգիին մղումով է որ խօսեցան: 2րդ գույխը կը սկսի «բայց»ով, որ արդէն ցոյց կու դայ, կը զգուշացնէ, որ այդ ճշմարիկ մարգարէններուն կողքին նաեւ կային սուր մարգարէններ, որոնցմէ պէտք է զգուշանալ: Այս նամակով Պետրոս Առաքեալ կ'ուզէ ցոյց դայ այդ սուր մարգարէններուն նկարագրային գիծերը, թէ ինչպիսին են: Նախ ամեն բանէ առաջ անոնք ծպկուած կը գործեն, որովհետք անոնք «կորսպարեր վարդապետութիւններ պիտի սպազմեցնեն ձեր մէջ» (1 հմր): Անոնց ուսուցումները կործանիչ են, բաժանող են: Անոնք անբարոյ եւ անառակ կենցաղ ունին եւ այդպէս կ'ուսուցանեն: Կը սիրեն մարդիկը շահագործել իրենց շինծու խօսքերով: Տարբերութիւնը, ճշմարիկ մարգարէն, որ Ասպուծոյ Սուրբ Հոգիին մղումով կը խօսի, իսկ սուր մարգարէնները շինծու խօսքեր կը խօսին: Պետրոս Առաքեալ նաեւ կը զգուշացնէ, որ «շաբեր պիտի հետեւին անոնց անառակութիւններուն» (2 հմր): Զարմանալիօրէն կը մրածենք, թէ արդեօր ինչո՞ւ եւ կամ ի՞նչ է պարագանը, որ շաբեր պիտի հետեւին անոնց անառակութիւններուն: Պողոս Առաքեալ պիտի ըսէ. «մարդիկ ականջ պիտի չկահին առողջ վարդապետութեան, այլ՝ իրենց սեփական ցանկութիւններուն համապարասխանող եւ զիրենք հաճոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտեն: Պիտի չուզեն ճշմարգութիւնը լսել, եւ առապելներու ականջ դալով պիտի կորսուին» (Բ Տիգ 4:3-4): Այս է պարագանը: Միւս կողմէ, սակայն, Պետրոս Առաքեալ նաեւ կը վսրահեցնէ, որ այսպիսիններուն աւարդը յսկակ է, անոնց դարպապարպութիւնը յայգնի է, անոնց կորուսպը պիտի չուշանայ (3 հմր): Իրենք իրենց գլխուն է որ կը բերեն իրենց դարպապարպութիւնը, մանաւանդ՝ իրենց արարով երը կը մերժեն եւ կ'ուրանան Յիսուս Քրիստոսը, որ փրկեց զիրենք (1 հմր): Այս միփքը առաւել եւս յսկակեցնելու համար, Պետրոս Առաքեալ Հին Կրտակարանէն երեք օրինակներ կը բերէ ցոյց դայու, թէ Ասպուծոյ դարպաստանը այդպիսներուն համար բացայացը է:

1. Մեղանչած իրեշտակները, որ չխնայեց:
2. Հին աշխարհին անհաւապ մարդկութիւնը, ջրհեղեղով մաքրեց զանոնք, միայն ազագելով Նոյը եւ անոր ընդունիքը:
3. Սողոմ Գոմորի կործանումը, միայն ազագելով Ղովգը:

Ինչպէս Պողոս Առաքեալ պիտի ըսէ. «Այս բաները պարահեցան՝ իրեւ օրինակ մեզի, որպէսզի չար բաներու չցանկանք, ինչպէս անոնք ցանկացին: Անոնց մեծագոյն մասը հաճելի չեղաւ Ասպուծոյ, ուսպի անոնց դիակները անապարփին մէջ դարպարպութեան» (Ա Կորնթ 10:5-6): Ուրեմն շաբ յսկակ է որ Տէրը այսպիսինները կը պահէ՝ դարպապարփին օրուան դանշանքներու մաքնելու համար, մանաւանդ՝ այնպիսինները, որոնք մարմնական պղծալից ցանկութիւններու կը հետեւին եւ Ասպուծոյ փերութիւնը կ'արհամարհեն, իսկ ասպուծածապաշրները պիտի փրկէ իրենց փորձութիւններէն (9-10 հմր): Ահա այս խոսպումին լոյսին դայ շարուանակներ մեր հաւաքի կեանքը, որովհետք Ասպուծոյ խոսպումին համաձայն՝ մենք կը սպասենք նոր երկինքի մը (3:13):